

## ԳԼՈՒԽ Գ ՄՈԳԱԿԱՆ ՀԱՅԵԼԻ

Յովնան պահ մը այդ խմբակին ետեւէն նայեցաւ, կռթնած իւր  
Նիզակին, եւ կ'ըսէր ինքն իրեն:

«Է՛հ, շատ կարելի է, որ Գուրգէն իմ այս խօսքերոմն զայրացաւ,  
ամնուեցաւ, բայց միթէ ամէն ինչ, որ ըսի, ճշմարտութիւն չէ՞ր: Այո,  
կրնար ինք իրաւամբ ինձ պատասխանել՝ եթէ նախարարք եւ  
իշխանք անպիտան եւ յիմար կին, ժողովուրդը աւելի անպիտան եւ  
յիմար էր, որ նոցայ քմաց եւ հաճույից անասնաբար կը հնազանդէր:  
Այո, այդ է իրաւացի պատասխան իմ ըսածներուս, բայց ի՞նչ ընել.  
գրգռել ժողովուրդը ընդդէմ իւր դարաւոր տեարց եւ իշխանաց, եւ  
այսպիսի՞ ժամանակ, երբ արաքը մէկ կը սղմեն, յոյնը միւսէն, աս  
խեղճ երկիրը ոտնակոխ ընել եւ հայութեան անունը ջնջել  
սովորութիւն ըրած են. Մահմեդ կը յորդորէ իր աշակերտները  
անգուրք եւ անողորմ լինիլ քրիստոնէից դէմ, եւ այս քրիստոնեայ  
յոյները չեն արգելէր ոչինչ հարստահարութեան ընդդէմ քրիստոնեայ  
հայուն: Այո, երկու ազգաց թագաւորներն իրարու հետ կը  
պատերազմին եւ Հայաստան կը կործանեն: Երեկ անդիէն Թեոփիլոս  
մը եկաւ ջարդեց, գերեց ու քանդեց, այսօր Ապուճաֆար մը ասդիէն  
կը բուսնի, որ նոյնպէս եւ աւելի կը կոտորէ, կավարէ եւ  
կանապատացնէ: Եւ այս չի բաւեր, մեր նախարարք փոխանակ  
ընդհանուր վիճակին դարման մը ընելու յիմարաբար ողորմելի  
փառասիրութեամբ կամ անմիտ շահասիրութեամբ իրարու հետ կը  
կռուին եւ զիրար կը դաւաճանեն: Եւ այս թշուառութեան  
տեսարանին դու վկայ եղիր, դո՛ւ հայ, դո՛ւ քրիստոնեայ, դո՛ւ խեղճ  
Յովնան, եւ անտարբեր կա՛ց իբրեւ քարէ արծան, որ քու եղբայրդ  
տանջանաց մէջ մեռնի, քու զաւակդ մոռնայ իր Լուսաւորիչը, իր  
հայութիւնը, կորչի երկուքին համար, քու կինդ եւ աղջիկդ երթան  
օտար երկիր աղախին եւ հարճ լինին սպաննողին եւ բռնաւորին եւ  
շղթայներու մէջ հառաչանց եւ արտասուլաց ձայներ խղդեն: Այդ է  
ահա այս քանի հարիւր տարիներ էն խեղճ հայուն բախտը. եւ  
նախարարին ընկեր ու բարձակից եկեղեցականը «Այս բոլոր մեր